կալուածատիրոջ գինեգործութեան գործարաններին, իսկ հեռուից կալուածատիրոջ մեծ և ընդարձակ այգւոյն, որ ինչպէս տեսինք և պարոն բժիշկ Միքայէլ Հայեանցն ասաց, աւելի քան 20 դեսեատին կ'լինէր։ Կալուածատէր պարոն Պետրոս Ղազարեանը վախճանուած էր քանի տարի յառաջ, որոյ միակ դուստրն առնելով յիշեալ պ. Հայեանցն համարւում է նոյնպէս կալուածատէր։ Պ. Պետրոսը Խաչմասում շինել է մի մեծ և հոյակապ եկեղեցի թրձեալ աղիւսով՝ Ղուբայու եկեղեցուց երկու անգամ մեծ, որոյ մէջ՝ դրան քամակից շինել է տուել երկու խորանանման դամբարան, միոյն մէջ թաղուած է Յովսէփ բէկը, իսկ միւսի մէջ թաղուած է ինքը՝ եկեղեցին շինել տուող Պետրոս բէկը։ Վերջապէս թէ եկեղեցի է և թէ դամբարան։ Բայց դեռ չսպիտակացրած եկեղեցին՝ վախճանել է պ. Պետրոսն 1887 թ. և այնպէս մնացել է եկեղեցին թերի, և առանց օծման[1]), որոյ թերութիւնը խոստացաւ լցնել պարոն Հայեանցն և հանդուցելոյն քեռայը փեսայ մեծապատիւ պ. Միքայէլ Աբիսօլոմեանցն։ Երանի՜ թէ եկեղեցին փոքր շինած լինէին և շուտ վերջացրած, որ խեղճ 30 տուն թաթախօս ժողովուրդը 10 տարի չմնային առանց ժամերգութեան և պատարագի. և այն մեծ շինութեան կէս ծախսումն շինէր եկեղեցական դպրոց և ապահովացնէր, քան թէ Մարդասիրական Ընկերութիւնից նպաստ խնդրէր։ Խաչմաս բառը պարզ հայերէն է, և նշանակում է այստեղ Խաչի մասն լինել, և գուցէ Աղուանից պատմութեան մէջ յիշուած խաչն լինի . . . այս տեղ պահած լինին երբեմն, ըստ որում այս տեղ և թաղաւորաց և գուցէ հայրապետաց գերեզմանք կան, որոց մին է Աղուանից Սենեքերիմ թաղաւորի գերեզմանը, որոյ վրայ գրուած է։

«Այս է տապան Սենեքերիմ արքայի», որ ի հարկ է Աղուանից թաղաւոր կը լինի։

Գերեզմանատունն Խաչմաս գիւղից կէս վերստ հեռու խիտ անտառի մէջ է, ծածկուած մեծ մասամբ մացառներով, բայց

---

[1]) Խաչմասի նորաւարտ եկեղեցին օծեց իմ կարգադրութեամբ Սաղիանի վանքի վանահայր Ստեփաննոս վարդապետն Ասատատցի, 1893 թուի յուլիսի 4ին Վարդավառի տօնին։